ՀՀ Արագածոտնի մարզպետ Դավիթ Գևորգյանի շնորհավորական ուղերձը Երևանի օրվա առթիվ

Սիրելի՛ հայրենակիցներ,
Շնորհավորում եմ սիրո և համերաշխության մայրաքաղաք Երևանի տոնի առթիվ:

Հազարամյակների պատմություն ունեցող մեր քաղաքի կոլորիտը յուրահատուկ է, Երևանի ամեն փողոց ու ամեն բակ, ամեն մի շենք ու ամեն քար իր պատմությունն ունի:

Երևանն այսօր ոչնչով չի զիջում աշխարհի զարգացած երկրների մայրաքաղաքներին, իսկ այն ավելի լավը դարձնելու համար պետք է ընդամենը մի բան. մեզանից յուրաքանչյուրը պետք է գիտակցի, որ իրեն է վստահված լինել այն օրինակելի բնակիչը, ով կարող է մյուսների սրտում առավել սեր ու հոգատարություն սերմանել մեր մայրաքաղաքի հանդեպ:

Երևանի հիմնադրման 2801 ամյակի առթիվ պատեհ եմ համարում երախտիքի խոսքս հղել բոլոր նրանց, ովքեր կանգնած են Երևանի պատմության հիմքում և բոլոր նրանց, ում ջանքով ու սրտացավությամբ Երևանն այսօր դառնում է ավելի զարգացած, ժամանակակից ու շեն:

Կրկին շնորհավորելով մեր սիրելի քաղաքի տոնի առթիվ՝ ցանկանում եմ ընդգծել, որ մենք ի զորու ենք միավորել մեր ջանքերը և հետագա սերունդներին փոխանցել ավելի ապահով ու բարեկեցիկ մայրաքաղաք:

Բոլորիդ մաղթում եմ սեր, երջանկություն և խաղաղ ապագա: